Արձանագրություն N 5
«ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» դեկտեմբեր 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան

1.Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների գնահատման ստացված պարզաբանումների և եզրակացության ամփոփման, 1-ին տեղ զբաղեցնող և հաղթող մասնակից ճանաչելու, բանակցություններ հրավիրելու և հարցում կատարելու մասին

(Կ. Գասպարյան)

1. <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ-ի, <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի և <<Լարիսա Նալբանդյան>> Ա/Ձ-ի կողմից 23.10.2018թ.-ին ստացվել են գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված փաստաթղթերը:

Ստացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց 01.11.2018թ.-ին թիվ 01/15.3/17638-18 և 01/15.3/17639-18 գրություններով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 67-րդ կետի համաձայն հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել միչև իրավասու մարմինների կողմից համապատասխան տեղեկատվության ստացումը:

Ի պատասխան վերը նշված հարցումների ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից 13.11.2018թ. թիվ 01/22.2/5672-18 գրությամբ ստացվել է պատասխանը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2018թ. թիվ 01/11-1/73792-18 գրությամբ ստացվել է պատասխանը:

Ուսումնասիրելով վերը նշված պատասխանները, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կրկին հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Հարցումը 30.11.2018թ. թիվ 05/15.3/19310-18 գրությամբ ուղարկվել է Կոմիտե:

Ի պատասխան նշված հարցմանը, Կոմիտեն 05.12.2018թ. թիվ 01/11-1/76105-18 գրությամբ ներկայացրել է պատասխան, իսկ ի լրումն նշված գրությանը 07.12.2018թ. թիվ 01/04-1/76831 գրությամբ ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովի կողմից նաև 29.10.2018թ-ին հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ամփոփելով վերը նշված գրություններով ստացված պատասխանները գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել ընթացակարգի գնահատումը:

Ստացված հարցումների և պարզաբանումների ուսումնասիրության արդյուքնում գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի և <<Գլոբալ Ինժիներ>> ՍՊԸ-ի

կողմից ներկայացվել են թիվ 14602, թիվ 16278 և թիվ 16749 լիցենզիաները, որոնց մեջ որպես լիցենզավորված մասնագետ նշված է միևնույն մասնագետը՝ Սուսաննա Ալբերտի Ղազարյանը, անձնագիր՝ AM 0519726:

ՀՀ պետական եկամուտների 07.12.2018թ. թիվ 01/04-1/76831 գրությամբ ներկայացված տեղեկատվության, <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի և <<Գլոբալ Ինժիներ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրերի և տեղեկանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բոլոր երեք մասնակիցների լիցենզիաների ներդիրներում նշված անձը միաժամանակ աշխատում է բոլոր մասնակիցների մոտ:

Բացի այդ «ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի /հայտը ներկայացվել է նույնպես 14.10.2018թ./ կողմից ներկայացված հայտարարության իսկությունը ճշտելու համար, 29.10.2018թ-ին հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Ի պատասխան վերոնշյալ հարցմանը 01.11.2018թ.-ին ստացվել է եզրակացություն, որի համաձայն Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ, որը պակաս է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից:

<<Արցախճան ինստիտուտ>> ՓԲԸ-ի մասով ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը Արցախի Հանրապետության հարկ վճարողների վերաբերյալ հաշվառում չի կատարում:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի հայտերը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով մերժել: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:
2. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 7-րդ, 8-րդ, 9-րդ 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովի քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերը (տեղեկությունները) տրամադրել է հանձնաժողովի անդամներին: Մասնակցի փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել և հայտը գնահատվել է բավարար:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <<Արցախճան ինստիտուտ>> ՓԲԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից:

Հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանել անգործության հինգ օրացուցային օր ժամկետ:

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին հրավերով նախատեսված ժամկետներում ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Կ. Գասպարյան)

2.1 <<ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն>> ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կ. Գասպարյան

Անդամներ՝ Ա. Պապյան

Ն. Մեսրոպյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան